

# ՏԱՐԱԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Նաիրա Մկրյան

*Երևանի պետական համալսարան*

**Ց**ուցայնության գաղափարը հայտնի է դեռևս անտիկ ժամանակներից, իսկ նոր ժամանակներում ցուցայնության խնդրի հետազոտության սկիզբը դրեց գերմանացի հնդեվրոպագետ Կ. Բրուզմանը, որից հետո՝ հայտնի հոգեբան և լեզվաբան Կ. Բյուլերը: Հետագայում խնդրին անդրադարձավ Չ. Պիրսը, ով առաջարկեց ցուցական դերանուններն անվանել «ինդեքսային նշաններ», որոնք անմիջական կապ են հաստատում բառի և օբյեկտի միջև (Մարս 2000:88-95): Օ. Եսպերսենն առաջարկեց «շիֆտեր» հասկացությունը, որով նշեց այն լեզվական միավորները, որոնց գործածությունն ու ընկալումը էապես պայմանավորված են խոսողով և հաղորդակցության այլ կողողինատներով (Եսպերսեն 1958:60-65): Ըստ այդմ՝ ցուցային տարրերը շիֆտերների ցայտուն օրինակ են, քանի որ դրանք անհնար է վերարտադրել լեզվական կամ արտալեզվական համատեքստից դուրս:

Ժամանակակից լեզվաբանությունն առաջին հերթին բնութագրվում է մարդակենտրոն մոտեցման գերակայությամբ, և բնականաբար նրանում հիմնարար սկզբունք է դառնում մարդու գործոնի՝ ուշադրության կենտրոնում գտնվելու սկզբունքը, որը ենթադրում է լեզվի ուսումնասիրություն՝ մարդկային գործոնի հետ սերտ կապի մեջ (Արբուսյան 1995:64): Լեզվական մարդակենտրոնության օրինակաչափ դրսևորումը մարդու և նրա գործունեության ուսումնասիրությունն է ժամանակի և տարածության մեջ, որի հետ սերտորեն կապված է ցուցայնության գաղափարը:

Ցուցայնությունը լեզվական այնպիսի միջոցների գործածությունն է, որոնք կարող են մեկնաբանվել միայն հաղորդակցական ակտի ֆիզիկական կողողինատներին դիմելով, իսկ համապատասխան լեզվական տարրերն ընդունված է անվանել ցուցային տարրեր: Ջ. Լայոնզի ձևակերպմամբ՝ ցուցային է լեզվի այնպիսի տարրը, «որի իմաստային կառուցվածքի մեջ ընգրկված է օբյեկտի նույնականացումը՝ խոսքային ակտի հետ նրա ունեցած հարաբերության, նրա մասնակիցների և համատեքստի միջոցով» (Lyons 1981:137):

Ընդունված է առանձնացնել ցուցայնության երեք հիմնական տեսակ՝ առարկայական կամ անձնական, տարածական և ժամանակային, որոնք համապատասխանում են խոսքային ակտի գործաբանական փոփոխականներին (բերում ենք Ե.Վ. Պադուչևայի առաջարկած եզրը), որոնցով կողմնորոշվում են նրա (խոսքային ակտի) մասնակիցները:

Լեզվաբանական գրականության մեջ կարելի է գտնել ցուցայնության երևույթի գանազան մեկնաբանություններ, սակայն հետազոտողների զգալի մեծամասնությունը լեզվի ցուցային տարրերը դասակարգում է հետևյալ կերպ (Արտյուხოვა 1985; Պադուչևա 1996; Fillmore 1971 և այլոք). անձնական դերանուններ (առաջին և երկրորդ դեմքի), որոշ դեպքերում՝ բայի քերականական դեմքը (առաջին և երկրորդ), ցուցական դերանուններ, մակբայներ, քերականական ժամանակ, որոշ բայերում դիտվող ցուցային բաղադրիչներ: Ընդհանրացված ձևով կարող ենք ասել, որ ցուցայնությունն իրականացվում է լեզվական բոլոր մա-

կարդականների միավորների միջոցով՝ ձևայինների, բառերի և շարահյուսական կառույցների, սակայն տարբեր լեզուներում դրանց հնարավորությունները տարբեր են. մասնավորապես՝ անգլերենում, որը կցական լեզու է, մեծ թիվ չեն կազմում թեքական ձևայինները, մինչդեռ ցուցայնությունը հաճախ է իրականացվում շարահյուսական կառույցների միջոցով:

Ա.Ի. Ստերնինը, փորձելով տարրոշել անվանողական և ցուցային բառերի սահմանները, նշում է նրանց միջև դիստոպ հետևյալ տարբերությունները. ա) ցուցային բառերի հարաբերական իմաստը, այսինքն՝ բառի համապատասխանությունն առարկային (կողմնորոշման կենտրոնին), ըստ որի բնութագրվում է մեկ այլ առարկա (այն, ինչ ներկայանում է ցուցային ձևով), բ) ցուցային ձևով ներկայացվող առարկայի զգայական ընկալման անհրաժեշտություն. այսինքն՝ ցուցային բառերը կարող են արտահայտել միայն այն, ինչ գտնվում է հաղորդակցական ակտի մասնակիցների զգայական ընկալման շրջանակներում (Стернин 1973:8): Կարևորելով անվանողական և ցուցային բառերի սահմանազատման անհրաժեշտությունը, նշենք սակայն, որ առաջարկված տարբերակիչ հատկանիշները սխեմատիկ բնույթ են կրում և բավարար չեն ցուցայնության երևույթի լիարժեք ուսումնասիրության համար:

Ն.Գ. Կիրվալիձեն առաջ է քաշում մեկ բառում անվանողական և ցուցային գործառույթների առկայության գաղափարը. ըստ այդմ՝ բառերին հատուկ են ցուցայնության տարբեր աստիճաններ, որ թույլ է տալիս դրանք դասակարգել որպես բուն ցուցային, կիսացուցային բառերի և սպասարկու տարրերի, որոնց իմաստը զուտ սուբյեկտիվ բնույթ ունի (Кирвалидзе 1991:21):

Անդրադառնալով տարածական ցուցայնության կարգին, նշենք, որ այն արտահայտում է առարկայի գտնվելու վայրը կամ շարժման ուղղությունը տարածության մեջ՝ խոսքի պահին պայմանականորեն ընտրված հաշվարկման կետի համեմատ, որը կարող է լինել խոսողը, հասցեատերը, որևէ երրորդ անձ կամ առարկա: «Հաշվարկման կետը խոսողի դիրքն է տարածության մեջ, և նրա կողմից ընկալվող օբյեկտների տեղայնացումը կատարվում է ըստ խոսողի նկատմամբ նրանց ունեցած դիրքի» (Ерзинкян 2013:214): Այստեղ խիստ կարևոր է հաշվարկման կետի ընտրությունը, քանի որ նրա փոփոխության դեպքում ցուցային բառը կարող է առկայացվել բոլորովին այլ իմաստով: Երբ որևէ առարկայի մասին խոսելիս ասում ենք, որ այն գտնվում է աջ կամ ձախ կողմում, վերևում կամ ներքևում, ապա նկատի ունենք նրա դիրքը խոսողի՝ որպես հաշվարկման կետի նկատմամբ: Ուստի եթե փոխենք հաշվարկման կետը, օրինակ՝ նշենք առարկայի դիրքը խոսակցի կամ որևէ այլ օբյեկտի նկատմամբ, ապա կստանանք բոլորովին այլ պատկեր: Սակայն այս պնդումը ճիշտ է միայն այն դեպքում, երբ խոսակիցը պայմանականորեն գտնվում է խոսողի դիմաց: Մինչդեռ խոսակիցը կարող է գտնվել խոսողի կողքին. այս դեպքում ցուցայնության հաշվարկման կետերը համընկնում են: Այստեղից հետևում է, որ ցուցայնության առկայացումը պայմանավորված է ոչ միայն խոսողի դիրքով, ինչպես ընդունված է, այլև՝ խոսակցի:

Որոշ դեպքերում ցուցայնության կենտրոնը ոչ խոսողն է և ոչ էլ՝ խոսակիցը: Օրինակ՝ As it was mentioned above... կառույցում ցուցային կենտրոնը տեքստի այն կետն է, որում տվյալ պահին գտնվում են տեքստի հեղինակն ու հասցեատերը: Այս դեպքում գործ ունենք այսպես կոչված տեքստային կամ խոսութային ցուցայնության հետ, որը հատուկ է հիմնականում գրավոր խոսքին:

Եթե խնդրին մոտենանք փիլիսոփայության տեսանկյունից, ապա տարա-

ծությունը, ինչպես նաև ժամանակը, գոյության ձևի, ավելի ճիշտ՝ նրա հատկանիշների բնութագիրն է: Այս իրողությամբ է բացատրվում այն փաստը, որ տարածական և ժամանակային ցուցայնությունները սերտորեն կապակցված են, հաճախ՝ ներակա ձևով: Օրինակ՝ “*I was here yesterday.*” նախադասության մեջ *here* ցուցային տարրի գործածությամբ ինքնին ենթադրվում է, որ խոսողը խոսքի պահին այնտեղ է, ուր եղել է նախորդ օրը. այսինքն՝ *here* տարածական ցուցային տարրը ենթադրում է *now* ժամանակը:

Որոշ դեպքերում գտնում ենք հակառակ պատկերը. տարածությունն է պայմանավորվում ժամանակով: Այսպես, “*I am reading a newspaper.*” նախադասության մեջ ներկա շարունակական բայաձևի գործածությամբ ենթադրվում է խոսքի պահը (*now*), որի միջոցով էլ, ներակա ձևով՝ գործողության կատարման վայրը (*here*): Պետք է նշել, սակայն, որ նման փոխապայմանավորվածությունը վերաբերում է միայն այն նախադասություններին, որոնցում բայն արտահայտված է ներկա, իսկ անգլերենում՝ ներկա շարունակական բայաձևով:

Տարածական ցուցայնությունը լեզվում արտահայտվում է երկու տեսակի տարրերով՝ անվանական բառակապակցություններով, որոնց կառուցվածքում ընդգրկված են ցուցական դերանուններ (*this book; that book*) և մակբայական տարրերով (*here; there*), այսինքն՝ ցուցայնությունն արտահայտվում է բառույթների և շարույթների միջոցով, ըստ որում խոսքի մասերին հատուկ են ցուցայնության տարբեր աստիճաններ: Առավել ընդունված կարծիքի համաձայն՝ ցուցայնության նվազագույն աստիճանը հատուկ է գոյականներին, ածականներին, նախդիրներին և շարժման բայերին:

Անդրադառնալով տարածական գոյականներին, նշենք, որ դրանց ոչ բոլոր դասերն են աչքի ընկնում ցուցայնության ցածր աստիճանով: Տեղանուններն, օրինակ, բոլորովին զուրկ են ցուցային իմաստից, ինչպես նաև՝ հատուկ անուններն առհասարակ, քանի որ նրանք կապվում են կոնկրետ պատկերացումների հետ և իմաստային հարաբերականություն չեն ցուցաբերում: Խոսելով տարբեր լեզվական նշանների առկայացման պայմանների մասին, Շ. Բալլին նշում է, որ հատուկ անուններն առկայացման կարիք չունեն, քանի որ նրանք «առկայացվում են իրենք իրենցով» (Баалти 1955:91-92): Մյուս կողմից, անգլերենում (ինչպես նաև հայերենում, ռուսերենում) քիչ չեն տարածականության իմաստ արտահայտող գոյականական շարույթները, որոնք աչքի են ընկնում ցուցայնության բավականին բարձր աստիճանով, և որոնց առկայացումը կապվում է սուբյեկտի առկայացման հետ: Դրանցից են, օրինակ, *at home* և *in town* շարույթները: Այսպես, “*I am at home.*” նախադասության մեջ *at home* տարածական շարույթի իմաստն առկայացվում է *I* անձնական դերանվան միջոցով. խոսողն *իր* տանն է: Մինչդեռ “*He is at home.*” նախադասության մեջ նույն շարույթով արտահայտվում է մեկ այլ տան գաղափար՝ որևէ երրորդ անձի տան:

Ե. Երզնկյանը որպես ցուցային տարր պարունակող գոյականներ բերում է *departure, deviation, arrival* գոյականները, որոնք նշում են շարժման սկզբնակետ կամ վերջնակետ (*departure – going away (from); deviation (from); arrival-act of coming to*) (Ерзинкян 2013:265):

Ցուցային տարր են պարունակում նաև որոշ բայերի իմաստային կառուցվածքները: Որպես այդպիսիք Ա.Ա. Կիբրիկը նշում է *come* և *go* բայերը. *come to X* արտահայտությունը կարող է գործածվել միայն այն դեպքում, եթե խոսողը խոսքի պահին կամ՝ նկարագրվող գործողության պահին գտնվում է *X* տեղում, հա-

մապատասխանաբար՝ *go to X*, եթե նա *X* տեղում չի գտնվում (Кибрик 1983:122): Սրանց կարելի է ավելացնել նաև *bring, take* բայերը, որոնցով նշվող գործողությունները պայմանավորվում են խոսողի (կամ՝ որևէ այլ օբյեկտի) գտնվելու վայրով. «բերել *դեպի* խոսողը; տանել խոսողից»:

Տարածական ցուցայնությունը հիմնականում կապվում է *մոտ/հեռու* հակադրության հետ (ցուցային կենտրոնի համեմատ, որն ամենից հաճախ խոսողն է): Սակայն կարելի է առանձնացնել նաև ավելի բարդ ցուցային համակարգեր, որոնք հիմնված են խոսողի համար ռեֆերենտի երևալ/չերևալու, նրա՝ խոսողից աջ կամ ձախ, վերև կամ ներքև գտնվելու վրա (օրինակ՝ *the next room, the room above*): Ամեն դեպքում, բոլոր համակարգերում ցուցային իմաստների արտահայտման հիմնական ծանրությունն ընկնում է ցուցական դերանունների և տեղի մակբայների վրա, որոնք ընդգրկված են ցանկացած լեզվի ձևաբանական համակարգում և հանդիսանում են մարդկային լեզվի հնագույն և հիմնական տարրերից մեկը: Ցուցական դերանունների հակադրության հիմքում (*this/that*) ընկած են սուբյեկտի և օբյեկտի տարածաժամանակային հարաբերությունները, օբյեկտի՝ սուբյեկտին մոտ կամ նրանից հեռու գտնվելու գաղափարը: Նույնը կարող ենք ասել նաև *here* և *there* տեղի մակբայների վերաբերյալ (այստեղ, իհարկե, գործ ունենք ոչ թե տարածաժամանակային, այլ՝ տարածական հարաբերությունների հետ):

Տարածական ցուցայնությունը կարող է նշել ինչպես կայուն, այնպես էլ՝ փոփոխական տարածական հարաբերություններ, ըստ որի առանձնացվում է տարածական ցուցայնության երկու տեսակ՝ տեղի և ուղղության: Սակայն տարածական ցուցայնության դաշտի հիմնական բաղադրիչները՝ *here* և *there* մակբայները, այս առումով նշույթավորված չեն: “*I am here.*” և “*Come here.*” նախադասություններում տեղի և տեղափոխության ցուցային իմաստները տարբերակվում են ոչ թե ցուցային տարրի, այլ՝ համապատասխան բայերի բառիմաստների միջոցով: (Նպատակ չունենալով կատարելու համեմատական վերլուծություններ, նշենք այնուամենայնիվ, որ նույնը գտնում ենք հայերենում, որտեղ *այստեղ* և *այնտեղ* ցուցային տարրերը նշում են ինչպես տեղ, այնպես էլ՝ ուղղություն, ի տարբերություն ռուսերենի, որտեղ գոյություն ունեն դրանցից յուրաքանչյուրը նշող զուգահեռ ձևեր. *здесь-сюда; там-туда*):

Ամփոփելով մեր հետազոտության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ տարածական ցուցայնությունը ցուցայնության դաշտի երեք հիմնական բաղադրիչներից մեկն է, որն անմիջականորեն կապված է ժամանակային ցուցայնության հետ՝ ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով: Տարածական ցուցայնության, ինչպես նաև ցուցայնության ցանկացած տեսակի համար առաջնային է ցուցայնության կենտրոնի գործոնը և այդ կենտրոնը հիմնականում, սակայն ոչ միշտ, խոսողն է: Տարածական ցուցայնությունը հատուկ է տարբեր խոսքի մասերի, որոնք առանձնանում են ցուցայնության տարբեր աստիճաններով: Տարածական ցուցայնությունն արտահայտվում է ամենատարբեր լեզվական միջոցներով, սակայն դաշտի հիմնական բաղադրիչները տեղի մակբայներն են և ցուցական դերանունները: Տարածական ցուցային տարրերի առկայացումը հաճախ պայմանավորված է սուբյեկտի առկայացմամբ՝ ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Апресян, Ю.Д. (1995) *Таврологические и контрадикторные аномалии.* // Избранные труды. М.: Языки русской культуры.
2. Арутюнова, Н.Д. (1988) *Типы языковых значений: Оценка. Событие. Факт.* М.: Наука.
3. Балли, Ш. (1955) *Общая лингвистика и вопросы французского языка.* М.: Изд. иностр. лит.
4. Бюлер, К. (1993) *Теория языка.* М.: Прогресс.
5. Ерзинкян, Е.Л. (2013) *Дейксис слова. Семантика и прагматика.* Ереван: ЕГУ.
6. Есперсен, О. (1958) *Философия грамматики.* М.: Изд. иностр. лит.
7. Кибрик, А.Е. (1992) *Очерки по общим и прикладным вопросам языкознания: Универсальное, типовое и специфичное в языке.* М.: Изд. МГУ.
8. Кирвалидзе, Н.Г. (1991) *Дейктические средства в системе современного английского языка и их роль в организации текста.* / Автореф.дисс. докт. фил. наук. Москва.
9. Падучева, Е.В. (1996) *Семантические исследования. Семантика времени и вида в русском языке. Семантика нарратива.* М.: Языки русской культуры.
10. Пирс, Ч.С. (2000) *Логические основания теории знаков.* СПб: Алетейя.
11. Стернин, И.А. (1973) *К проблеме дейктических функций слова.* / Автореф. дисс. канд. фил. наук. Москва.
12. Fillmore, Ch. (1971) *Studies in Linguistic Semantics.* / Papers presented at a conference sponsored by the Dep. of Linguistics, Ohio State University.
13. Lyons, J. (1981) *Language, Meaning and Context.* London: Fontana.

### **Пространственный дейксис в английском языке**

В статье рассматривается указательное поле пространства в английском языке. Исследование основывается на двух основных положениях: а) пространственный дейксис тесно связан с дейксисом временным; б) в семантике различных частей речи присутствуют различные степени дейктичности.

### **Spacial Deixis in English**

The article deals with the problem of deictic field of space in English. The study of special deixis is based on two main factors: a) special deixis is connected with temporal deixis; b) different parts of speech are characterized by different degrees of deictic meanings.